

57

Quincy

Quincy

9(47.925)

9-24

1927



9(47-924)

19 AUG 2011

9-24


24 JAN 2008

№ 1 «ՌԱԶՄԻԿ»-ի ԳՐԱԴԱՐԱՆ № 1

# Գ Ա Ղ Տ Ն Ի Փ Ա Ս Տ Ա Թ Ղ Թ Ե Ր Ը

Արրեջանի դառարական գործունեությանից մի էջ.

1007  
(33204)



~~33204~~  
337

Ե Ր Ե Ի Ա Ն

Դիստոր Շսաթի Տպարան

1920

13 MAR 2013

4656



### ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Ազրբեջանն իր գոյութեան ընթացքում վարել է Հայաստանի նկատմամբ Համիդեան քաղաքականութիւն. դրա պարզ տպացոյցները կարող ենք գրտնել այն ծածկագիր հեռագիրների մէջ, որ փոխանակել են Ազրբեջանի կառավարութեան, նրա Հայաստանի դիւանագիտական ներկայացուցիչներին և այլ ազնետների միջև:

Այդ գաղտնի գրագրութիւնից արեի լոյսի նման պարզում է այն թունոտ վերաբերմունքը, որ Ազրբեջանի կառավարութիւնն ունեցել է դէպի Հայաստանի Հանրապետութիւնը:

Հարեան հանրապետութեան մէջ ներկայացուցչութիւն հաստատել և առաջին իսկ օրից նպատակ դնել այդ երկրի հիմունքները քանդելու մասին մտածելու - դա միայն և միայն թիւրքին ըմբռնելի բան է, որովհետև, երբ մի պետութեան մէջ ներկայացուցչութիւն ես հաստատում, դա ինքնին պարզ է, որ այդ երկու պետութիւնների մէջ գոյութիւն ունի, եթէ ոչ բարեկամական, գէթ տանելի յարաբերութիւն: Սե հասկանալի է, որ դիւանագիտական ներկայացուցիչների պարտականութիւնը պիտի լինի աննօրմալ պարզաները աշխատել չէզոքացնել և հնարաւոր եղածին չափ, երկու ժողովուրդների միջև բարեկամական



4 3663-9/1

կապ հաստատել: Միջազգային ըմբռնումը դիւանագիտական ներկայացուցչութեան՝ այս է: Այն ինչ, թաթար պետութիւնը դիւանագիտական ներկայացուցչութեան նկատմամբ ունի իւրայատուկ ու ծուռն ըմբռնում: Նրա տեսակէտը, ինչպէս ցոյց են տալիս այդ գաղտնի վաւերագրերը, ոչ աւել, ոչ պակաս՝ լրատութիւնն է: Այլ դեր Ազրբէջանի դիւանագիտական ներկայացուցիչը չունի, քան լրտեսել Հայաստանի զօրական ոյժերը, զօրքերի շարժումները, քաղաքական դիտումները, ֆինանսները և հրահանգներ տալ իր կառավարութեան, թէ ինչո՞վ և ինչ ձևով հնարաւոր է Հայաստանի Հանրապետութեան վնասներ հասցնել: Աւելին դեռ, երկրի ներսի թշնամի ու ապստամբ տարրերին դրամական ու գինւորական աջակցութիւնները ցոյց տալ և խոչնդոտ հանդիսանալ Հայաստանի հանրապետութեան ծաւալելուն իր պապկեանական հայրենիքում:

Որպէջդի պարզ լինի, թէ Ազրբէջանը ինչ տենդոտ աշխատանք է կատարել Հայաստանի դէմ իր դիւանագիտական ներկայացուցիչների միջոցով, բերել է մի քանի թաւկան տւեսներ: Պաղտնի գրազրութիւնները, ինչպէս ցոյց են տալիս ամսաթւերը, սկսել են անմիջապէս, երբ ոտք է դրել Հայաստան Ազրբէջանի ներկայացուցիչ Թէքինսկին: Առաջին դադանի ծածկագիր հետադիրը ուղղւած է Բօզու, արտաքին գործերի նախարարին, 1919 թի մարտի 22-ին, իսկ վերջին ծածկագիր հետադիրը Երևան՝ արտաքին գործերի նախարար Քան Տոյսկուց՝ Հայաստանի ներկայացուցիչ Մակինսկու անունով, 1920 թի մարտի 24-ին: Ասել է՝ ճիշտ մի ամբողջ տարի են տեւել գաղտնի գրազրութիւնները: Եւ այդ մի տարւայ ընթացքում փոխանակւել են 75 հետադիրներ, չհաշւած յատուկ մարդկանց միջոցով

ուղարկւած «գեկոյցները», որոնց մասին ակնարկներ կան նաև հետադիրների մէջ: Մի տարւայ մէջ միայն 75 ծածկագիր հետագիր: Սա նշանակում է երեք օրը մի հետագիր. այնպիսի խոշոր թիւ է սա, որ իսկպէս մեր որակույթը «տենդոտ աշխատանք», բնաւ չափազանցութիւն չէ: Բայց հետաքրքրականը այն հոգեբանական պայմաններն են, որի մէջ սկսում է Ազրբէջանի դիւանագիտական ներկայացուցիչ Թէքինսկին իր չար աշխատանքը Հայաստանի դէմ: Մարտի 22-ի հետադրի առաջին մասը ծածկագիր չէ: Թէքինսկին այստեղ նկարագրում է այն սիրայի ընդունելութիւնը, որ ցոյց են տել Հայաստանի կառավարութիւնն ու կաթուղիկոսը իրեն: Թէքինսկին շեշտում է այն հանգամանքի վրայ, որ Հայաստանի «կառավարութեան անդամները ճատերի մէջ մասնանշում էին բարեւամական յարաբերութիւն հաստատելու անհրաժեշտութիւնը»... Իսկ կաթուղիկոսին այցելելու ժամանակ կաթուղիկոսը շեշտեց հայերի ու մուսուլմաններ իրարեկամութեան անհրաժեշտութիւնը և խօստացաւ դիմել հայ ժողովրդին՝ հաշտ ապրելու մուսուլմանների հետ... Այդա հետադիրը շարունակում է. «կաթուղիկոսը ինձ պահեց ճաշի և մինչև վերջին րոպէն չհեռացաւ ինձանից: Մաղութի չզրյութեան պատճառով զմիածնի վանքը ու կաթուղիկոսար. լոյսից զրկւած են... Գաղթականների գրութիւնը ծանր է, անհրաժեշտ էր նաևց լայն օգնութիւն ցոյց տալ»... Թում է, թէ իրերի ու վերաբերմունքների այս պայմաններում, բնական էր, որ հարկան հանրապետութեան ներկայացուցիչին այլ բան չէր թուում, քան «րոպէն համարել» իսկպէս «յարմար և բարեկամական յարաբերութիւններ հաստատելու պետութիւնների միջև»... Բայց արեւելքի թաթարը նայն իսկ միջոց չի տալիս. հէնց նայն հետադրի կրկնորդ մասը



247

շահերի վրայ" (№ 247);

Իսկ № 75 փաստաթղթի մէջ ասուած է. „Տօմոսը Երևանում արգելեց Մակինսկուն անցնել Նախիջևան, այն արտճառարանութեամբ, թէ այդ շրջանը գտնուում է Հայաստանի կառավարութեան վարչութեան ներքոյ: Մակինսկին դրամները յանձնեց ինձ, սպասում եմ ցուցմունքների, թէ ի՞նչպէս զործադրեմ Նախիջևանին յատկացած գումարները“:

„Սպասում են մեծ գէպեր ամբողջ Նարուշահիջևանի և Ղարսի շրջաններում: Առանց մի օր կորցնելու ուղարկեցէք խոշոր գումար՝ զինուորական կազմակերպութիւնների համար“: (№ 420)

Բացի դրամական օգնութիւնից՝ Ադրբէջանը Նախիջևանցիներին օժանդակել է նաև ռազմամթերքով. „Անհրաժեշտ է յայտնել զօկտ. Մուլթանօվին, որ Նախիջևան փամփուշտ և փող ուղարկելու մասին հայերը նախագրուչացած են. Մտնանշած առարկաները երբէք չուղարկէք Մինքենդ և Խոջըէկ գիւղերի վրայով“ (№ 204):

Նախիջևանի գէպերին գուղընթաց՝ Ադրբէջանի դիւանագիտական ներկայացուցիչը խորհուրդներ է տալիս իր կառավարութեան նաև տիրանալ Չանգեղուրին... „Անհրաժեշտ է, որ Ադրբէջանը երկու շաբաթեայ ընթացքում մաքրի հաշիւները Չանգեղուրի հետ և զօրքերը առաջացնէ մինչև Ղաժարու: Այժմ ամենայամար ժամանակն է... Եթէ իմ առաջակարգը կընդունւի ձեր կողմից, ապա իրադրծեցէք առանց պատերազմ յայտարարելու: Շատ եմ խնդրում, որ օգտուէք բոլորից և ժամանակ չկորցնէք“... (№ 506):

Դադանի հեռագրների մէջ խօսք կայ նաև Երևանի գրաման մասին. „Մահմեդականները պատրաստուում են Նախիջևանի կողմից յարձակում գործել

248

Երևանի վրայ“... № 117):

Բայց ամենից հետաքրքրականը Չանգիբասարի նշանակութեան վերաբերմամբ Նախիջևանի թուրքութեան ունեցած կարծիքն է. „Եթէ զանգիբասարցիք անձնատուր լինեն, ապա մենք քաղաքական, քարոյսական եւ նիւթական տեսակետներից շատ ըանկկորցնենք. Խնդրում եմ ամեն ջանք գործդնել. որպէսզի հայերի յարձակումը գտնգիբասարցիների վրայ՝ յետ շարտելի Նրանց կողմից բոլոր հնարաւոր միջոցները ձեռնարկուած են“: (№ 1820):

Ադրբէջանի աշխատանքը բացայայտ է: Նախահանքերի սուստ գրամներն իրենց քայքայիչ դերն են կատարում Հայաստանի ներքս:

Որպէսզի պարզ լինի, թէ իսկապէս Ադրբէջանը դրամական խոշոր օգնութիւն է հասցրել Շարուր-Նախիջևանին ու Չանգիբասարին և այդ գրամներով է կազմակերպել այդ շրջանների ապստամբութիւնները, բաւական է մտնանշիլ երկու գծափայտ փաստի վրայ, որոնք սեղի ունեցան ի վիստ Ադրբէջանի: Առաջի փաստն այն է, որ Նախիջևանի նահանգապետին ուղարկուած մօտ 5 միլիոն դրամը՝ թմենք ու չէքեր՝ չէզոք գտաւում, աւաղակները յարձակում են գնացքի վրայ և կողոպտում են Ադրբէջանի դիւանագիտական ներկայացուցիչ Հախվերդովին. որի առիթով արտաքին գործերի նախարարին հեռագրում է: „Շատ եմ խնդրում թէ մուրբէրի գուր շապակցնէք, ինձ հետ տեղի ունեցած ըստմնելի գէպից յետոյ, որ պատրաստուած էր նախապէս չարագործների ձեռքով, իմ մնուլս համարում եմ անմտութիւն“ (№ 290):

Երկրորդ փաստը, սոյն թւականի ապրիլի 4 էն, Չափարաբազում տեղի ունեցած գէպըն է, ուր բռնուեցին Ադրբէջանի դիւանագիտական ներկայացու-

ցիչ Մակինսկու երեք ղաւաններն՝ իր աւտոմոբիլով, որոնք ջանգիբատար դրամ էին փոխադրում—կէս միլիան ադրբէյջանեան բոններ, քիչ քանակութեամբ էլ անդրկովկասեան բոններ և չէկեր: Այս դէպքեց յետոյ, անմիջապէս Մակինսկին դնաց թիֆլիս և այլևս չլերադարձաւ Հայաստան\*):

Դրամական օժանդակութիւնից դուրս, Ադրբէյջանը շարունակ իր ագէնտներէց մանրամասն տեղեկութիւններ էր ստանում մեր զորամասերի քանակի և նրանց դասաւորութեան մասին: (Տես №№ 153, 432, 2907, 448, 461, 469, 616...): Թէրիսկին շարունակ խորհուրդներ է տալիս իր կառավարութեան, թէ ի՞նչ պիտի անել նախիջևանցիներին օգնութեան գալու համար: Ետարուր-Նախիջևանի շրջանն ունի մօտ վեց հազար կիսականոնաւոր զօրք՝ հեծելազօրով, թնդանօթով և զնդացիներով: Պատերազմական գործողութիւնների ժամանակ զինւած սյտերի թիւը կարող է հասնել մինչև 10 հազարի» (№ 150) — գրում է Թէրիսկին: «Նախիջևանցիներն ինձ հարցնում են՝ ի՞նչպէս վարել և, արդեօք, Ադրբէյջանը օգնութեան կգոյ՞, եթէ նրանք հայերին ղեմադրութիւն ցոյց տան» (№ 83): «Անհրաժեշտ եմ գտնում, որ անյապաղ մեր գնդերը կենտրոնացեն հայկական սահմանների վրայ: Նախիջևանի ազդարնակութիւնը պատրաստ է ղեմադրութիւն ցոյց տալ» (№ 82): «Օգնեցէք մահմեդականներին, մեր զօրքերը դէպի Հայաստանի սահմանները շարժելով» (№ 485):

Բացի այն ընդհանուր ծրագիրը, որի իրագործ-

\*) Այս դէպքի դատավարութեան մանրամասնութիւնները տպածէ ռեազիկո-ի № 5 ի դատաստանական բաժնում:

ման համար Ադրբէյջանը ցանկացի է Շարուր-Նախիջևանը իր ձեռքում պահել, այն է՝ Ղարաբաղ-Չանգեզուր-Շարուր-Նախիջևան Մակու գծով անմիջական կապ հաստատել թիւրքիայի հետ, — եղել է և մի երկրորդ տեսակէտ. այդ այն է, որ Ադրբէյջանը միշտ էլ վախ է ունեցել դէպի հայերը, կասկածելով, որ ռուսների յաջողութեան դէպքում հայերը կմիանան նրանց հետ: Եթէ մեր յարաբերութիւնը կամաւորական բանակի հետ լարելի, հայերը դէպի մեզ թշնամական դիրք կը բռնեն, ուստի անհրաժեշտ է Հայաստանի համար Շարուր-Նախիջևանում վստահ ստեղծել» (№ 130):

Ապա կան հետաքրքրական տեղեկութիւններ Ղարսի և Բէիւք-Վէդիի շարժումների մասին: Այդ տեղեկութիւններից նոյնպէս ակնյայտ է Ադրբէյջանի օգնութիւնը երկու շրջանի մահմեդականներին: «Անյապաղ կապ հաստատեցէք Ղարսի կառավարութեան հետ: Տոյց աւելք նրան ամեն տեսակի աջակցութիւն, իմացէք, թէ ինչ կարիքներ ունի և հեռագրեցէք մեզ՝ անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելու համար» (№ 658): «Լեռնեցէք Բէիւք-Վէդիում և միւս գիւղերում կատարող դէպքերին. եթէ հնարաւոր է, ուղարկեցէք պաշտօնական ներկայացուցիչ, հակառակ պարագային Նշանակեցէք գաղտնի գործակալ» (№ 46):

Բէիւք-Վէդիի ժողովրդի յամառ կռիւների մասին գրում է. «Եթէ հայկական զօրքերը վերցրին գիւղը, կկոտորեն բոլոր մահմեդականներին, այդ պատճառով վերջիններս յամառօրէն պաշտպանուում են» (№ 14): «Միջոցներ ձեռք առէք, որ հայկական զօրքերը հեռանան, ապա թէ ոչ Բէիւք-Վէդիի մահմեդականների դրութիւնը կդառնայ ծանր և, նոյն իսկ,

խառնագաւոր" (№ 489):

Հայաստանը ներքին խլրտու քեւել բուն դոր-  
 ձնելուց զատ, Ազրբէջանը մէջոցներ չէ խնայել թու-  
 ռացնելու մեղնաւ տնտեսապէս. Բազուի հարոտու թիւն  
 Կապուոց նաւթը, մազու թն ու բենդինը Ազրբէջանի  
 ձեռքին եղել է ուժեղ միջոց՝ ազդելու Հայաստանի  
 կամքի վրայ: Երկաթուղուն, որպէս գլխաւոր ջիղը  
 Խրաքանչիւր երկրի առեւտրա-արդիւնաբերութեան,  
 ինչպէս և միակ միջոցը ապրանքների ու զորքերի  
 արագ տեղափոխութեան, — Ազրբէջանի դիւանագի-  
 տութիւնը առանձին ուշադրութիւն է դարձրել և  
 հրամաններ ու ցուցմունքներ է տւել իր կառավա-  
 րութեան, որպէսզի նաւթի ու մազու թի նկատ-  
 մամբ լինի զգոյշ, առատաձեռնութիւն ցոյց չտայ:  
 «Որեկեղ պատճառ բունելով յետաձգէր Հայաստանի  
 երկաթուղիների համար մազու թ ուղարկելը, որով-  
 հետե նախիջևանի շրջանում դէպքեր են սպաս-  
 տում» (№ 129): «Հայաստանի համար 500000 ինութ  
 նաւթ ուղարկելու մասին... Ապահովութեան խոր-  
 հուրը որոշել է նաւթ բաց չթողնել, մինչև Ազրբ-  
 բէջանի կառավարութիւնը լիովին թեան չենթար-  
 կէ դաշնագրի հաստատում երկու պայմանները» (№  
 54): «Ի՞նչ ֆինանսական տեսակէտից դժուարութիւն-  
 ներ յարուցեցէք, Հայաստանը շուտով ծանր դու-  
 թեան մէջ կընկնի» (№ 6):

Արտաքին ուժերի վրայ ազդելու միջոց էլ ու-  
 նի Ազրբէջանը. այն ժամանակ, երբ անգլիացիք ու-  
 բոշ օգնութիւն են ուղղում ցոյց տւած լինել Հա-  
 յաստանին, իր այս կամ այն երկրամասին տիրանա-  
 լու համար, Ազրբէջանի դիւանագիտական ներկա-  
 յացուցիչն անմիջապէս հրահանգում է Բազու՝ ար-  
 քաքին գործերի նախարարին, որպէսզի վերջինս իր

կառավարութեան անունից սպառնայ անգլիացի-  
 ներին. «Անհրաժեշտ է բողբեղ Հնդկաստանի, Թուր-  
 քեստանի, Աւղանիստանի, Մալայեան կղզիների և  
 Գովկաստի ողջ մահմեդականներին, նոյնպէս և Հաշ-  
 աութեան վեհաժողովի առաջ՝ անգլիացիների այն  
 ցանկութեան դէմ, որով նրանք մի քանի միլիոն  
 մահմեդականներին ենթարկում են թւով կէս միլիոն  
 հայերին...» (№ 60):

Իսկով դեպքումստեղ եղանակով խնդիրներ վրձ-  
 ուելուն, մանաւանդ, երբ խնդիրների մէջ դեր են  
 խաղում մեծ պետութիւնների ներկայացուցիչները,  
 Ազրբէջանը, շնորհիւ լայն տեղեկութիւնների ու իր  
 ազնիւների միջոցով ձեռք առած նախադրուշու-  
 թիւններին, կարողանում է ապահովել իր շահերը:  
 Իսկ շահեր ասելով, Ազրբէջանը միշտ էլ նկատի ու-  
 նի Հայաստանին որևէ ձևով վնաս հասցնելու ձեշտ  
 նոյն ըմբռնումը, ինչ որ ունեցել է Թուրքեան սաս-  
 նեակ տարիներ շարունակ հայերի նկատմամբ: «Պէտք  
 է վճռական առաջարկ անէ անգլիացիներին մեր  
 կառավարութիւնը՝ մեղ յանձնելու Զուլֆա-Շահ-  
 թախթի երկաթուղին՝ Ալեքսի-Զուլֆա գծով Պարս-  
 կաստանի հետ առեւտուր սկսելու համար: Յան-  
 ձնման ենթակայ այդ գիծը պէտք է երկարի մինչև  
 Դաւալու գիւղը: Անգլիացիներին այդ առաջարկն  
 անելու հետ միաժամանակ՝ մատնանշեցէք Հայաս-  
 տանի անընդունակութիւնը, քնացքների երթեկու-  
 թեան յաճախակի ընդհատումը. ընդ սմին, խոստա-  
 ցէք Նարուր-Նախիջևանում նոր կարգ հաստատել...»  
 (№ 558): Բայց երբ խօսք է լինում նոյն Զուլֆա-  
 Երևան գծի բացման մասին՝ լուկ առեւտրական դի-  
 տուսներով, առանց որևէ պետութեան գերիշխա-  
 նութիւնը նկատի առնելու, — Ազրբէջանի դիւանա-

գիտական ներկայացուցիչն անմիջապէս տալիս է իր եզրակացութիւնը. «մինչև չկարգաւորուեն մեր փոխ-յարաբերութիւնները, չորոշուեն սահմանները, Նրեւան-Չուլֆա դժի բացումը գտնում հմ աննպատակայամար: Տնտեսաւան տեսակէտից կշահեն միայն հայերը: Ճանապարհի բացումը մեզ անտեսապէս ոչինչ չի տալ. իսկ ինչ վերաբերում է մեր քաղաքական շահերին, առանց տյդ ճանապարհի էլ մենք կարող ենք իրականացնել թէ՛ նախընտանում և թէ՛ պարսկական Ատրպատականում» (№ 114):

Մի հետաքրքրական փաստի վրայ ևս անհրաժեշտ ենք համարում կանգ առնել, ցոյց տալու համար, թէ ինչպէս Ադրբէյջանը «բուլղարական վտանգը» իր ձեռքին, դեռ ևս մի տարի առաջ, դարձրած է եղել զէնք, օգտագործելու և խաբելու անգլիացիներին՝ անշուշտ, այս դէպքում ևս նպատակ դրնելով թուրքացիները Հայաստանի դիմադրական ոյժը: «Բուլղարիկների կողմից Բագրին վտանգ սպառնալը պատճառ բերեցէք և խնդրեցէք անգլիացիներին, որ Ղարսի թնդանօթները փոխադրեն Բագու» (№ 94) — խորհուրդ է տալիս Թէքլինսիկին իր կառավարութեան:

Մենք փոքր ինչ երկար կանգ առանք փաստերի դասաւորման վրայ, որպէսզի կարողանանք ընթերցողին պարզ պատկերացնել այն իրական վտանգը, որ գալիս է Ադրբէյջանի կողմից: Այդ վտանգը ոչ թէ պատահական ընդթ ունի, այլ խոր պատմական պատճառներ, որոնք ոչ այնքան բղխում են Գովկասի թաթարի հոգեբանութիւնից, որքան տաճկի: Ադրբէյջանը, ներկայ դէպքում, պարզապէս կամակատարն է դաժան Թիւրքիայի, որ դարեր շարունակ հայութեան կրծքին նստած՝ կրծել է նրա սիրտը և

թոյլ չի տուել ոտքի կանգնելու: Այսօր, երբ հայը վերջականապէս ազտուել է թիւրքի գերեշխանութիւնից և ունի իր անկախ պետութիւնը, և օր օրին նւաճումներ է անում ու տարածում է իւր պատմական հայրենիքում, ընտկան է, որ թիւրք-թաթար մեութիւնը բոլոր միջոցներին է դիմելու ոչ միայնարգելք հանդիսանալու Հայաստանի հանրապետութեան ուժեղանալուն, այլ և հնարաւոր դէպքում նրան պայթեցնելու:

Որպէսզի ցոյց տանք, որ մեր ասածը ճշմարտութիւն է, մի վերջին անգամ դիմենք գաղանի փաստաթղթերին, ուր ասուած է. «Ադրբէյջանը Հայաստանից բացի ուրիշ թշնամի չունի, ուստի անհրաժեշտ է Հայաստանի վրայ առանձին ուշադրութիւն դարձնել» (№ 202, 22 յուլիսի 1919 թ.):

Ահա այն մտայնութիւնը, որով առաջնորդուել է Թիւրքին, այսօր նոյնը շարունակում է և Ադրբէյջանը: Ասկայն գիտենալու է, որ այդ մտայնութիւնը խորխորատ տարաւ Թիւրքիային, կարող է խորխորատ տանել նաև Ադրբէյջանին...

Ա. Ղ.



ԱԴՐԲԷՋԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՆՐԱ  
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀ-  
ՄԱՆՆԵՐՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ԳՈՐԾՈՒՆԷՈՒ-  
ԹԻՒՆԻՑ ՄԻ ԷՋ

ՆԵՐԱԾՈՒՄԻՆ

Ստորև սպազբւած հեռագիրները այն դադոնի  
գրագրութիւններն են, որ փոխանակել են միմեանց  
մէջ Ազրբէջանի կառավարութեան ու իր Հայաստանի  
կառավարութեան կից՝ զիւանադիտական ներկայա-  
ցուցիչները, ինչպէս և նոյն ներկայացուցիչներն ու  
Ազրբէջանի այլ գործակալները:

Այս պաշտօնական փաստաթղթերը որոշակի  
բնոյթագծում են այն ազրբասիւ քաղաքականութիւնը,  
որ մի սուրբայ ընթացքում, այսինքն Երևանում  
զիւանադիտական ներկայացուցիչ նշանակելու օրից՝  
մինչև իր իշխանութեան վերջին օրերը՝ վարել են  
Հայաստանում Ազրբէջանի հին կառավարութիւնն ու  
նրա ներկայացուցիչները:

Այս դադատագիր փաստաթղթերը վաղուց դոնուում  
էին Հայաստանի հանրապետութեան արտաքին գոյ ծ'ու-  
րի նախարարութեան մէջ և վաղուց կարդացւած էին.  
նրանք բռնւում էին ուղարկելու պէս: Սակայն, ար-  
տաքին գործերի նախարարութիւնը չէր հրապարա-  
կում, սպասելով յարմար րոպէի. այժմ, Ազրբէջանում  
տեղի ունեցած լեզաշրջումից յետոյ, րոպէն կարելի է

հասած համարել:

Արտաքին գործոց նախարարութիւնը հրապար-  
ակում է այդ փաստաթղթերը ժամանակագրական  
կարգով, առանց բացատրութիւնների, որովհետեւ  
կարծում է, թէ նրանք արդէն իսկ պերճախօս կերպով  
պարզում են իրենց բնոյթը:

№ 1

Բագու, արտաքին գործերի նախարարին

Փոխադարձ այցելութիւններ արի. հանդիպում  
եմ սիրալիր վերաբերմունքի Մարտի 19-ին կառա-  
վարութիւնը պատուեց ինձ ճաշով. կառավարութեան  
անդամները ճառերի մէջ մատնանշում էին բարեկա-  
մական յարաբերութիւններ հաստատելու անհրա-  
ժեշտութիւնը: Երկու հանրապետութիւնների մէջ  
բարեկամական յարաբերութիւններ հաստատելու տե-  
սակէտից, րոպէն համարում եմ յարմար: Ուստի, պէտք  
է խօսքից գործի անցնել: Մարտի 18-ին գնացի էջմի-  
ծին, այցիլիցի կաթուղիկոսին, նա շեշտեց հայերի և  
մոսուլմանների բարեկամութեան անհրաժեշտութիւնը  
և խոստացաւ զիմիլ հայ ժողովրդին՝ հաշտ ապրելու  
մուսուլմանների հետ: Կաթուղիկոսը ինձ պահեց ճաշի  
և մինչև վերջին րոպէն չհեռացաւ ինձանից: Մագութի  
չգոյութեան պատճառով, էջմիածնի վանքն ու կաթու-  
ղիկոսարանը էլէքտրական լոյսից զրկւած են: Սա խոս-  
տացայ միջինաների համար մազութ տալ. ուստի  
խնդրում եմ շուտով տակաւներով մագութ ուղարկէք՝  
կաթուղիկոսին ուղարկելու համար: Գաղթականների  
ընդթիւնը ծանր է, անհրաժեշտ է նրանց լայն օգնու-  
թիւն ցոյց տալ: Դրամական փոխադրութիւններ  
չկատարելու պատճառով՝ առևտրականները ցանկա-

1007  
(33204)

3663-91

նում են դրամները ինձ յանձնել, որպէսզի մեր կառավարութիւնը իմ հեռագրի և չէկի հիման վրայ, Բագուում վճարէ: Ուղարկեցէք միայն 200 փութ մագութ, աւելին կարող է կառավարութիւնն օգտագործել: Մագութ ուղարկելու մասին կաթուղիկոսին արած խոստումս շատ մեծ տպաւորութիւն թողեց: Մարտի 14-ին Հայաստանը Թիֆլիսից ստացաւ 14 սիլիոն բոն, բայց եթէ Ֆինանսական տեսակէտից դժարութիւններ յարուցանէք, շուտով ծանր դրութեան մէջ կընկնի: Եկամուտների բացակայութեան պատճառով, Հոյաստանը չի կարող ինքնուրոյն կեանք վարել: Հնդկի զինւորները ուղևորեցին դէպի Նախիջևան: Եթէ անհրաժեշտ դառնէք, Կարսի կառավարութեան հետ կապ կհաստատուի 14 բարձր դասարանի գիմնադրիւթներ զալիս են ուսումը շարունակելու, եթէ ի հարկէ, նրանց կընդունեն դպրոց:

№ 6, 22 մարտի. 1919 թ.

Իրաւնագրիտական ներկայացուցիչ՝

Թեքիւնսկիյ

Ծանօթութիւն.— Այս հեռագրի առաջին մասը կաղմած է տաւնց ծածկագրի. ծածկագրերը սկսում է հետևեալ բառերից, «Ուղարկեցէք միայն 200 փութ մագութ...»

№ 2

Բագու, նախարարապետին, պատճէնը՝ արտաքին գործերի նախարարին

Հայաստանը ունի՝ վեց հետևակ գունդ, իւրաքանչիւրը բաղկացած երեք գումարտակից. բոցի դրանից, կաղմում է վեց Ղարաբաղի գումարտակ և մէկ Երևանի պահակային գումարտակ. ամբողջ հե-

տեակը չի անցնում 10 հազարից:

Հեծելազորի երեք բաժնակ, իւրաքանչիւրը երեք էսկադրօնով. միայն մէկ էսկադրօնը ունի ձիեր: Երկու դաշտային մարտկոց, հինգ լուսնային և մէկ հեծելազորի կայ հրեք զրահապատ գնացք, որ խլած է վրացիներից: № 41, 10 ապրիլի 1919 թ.

Իրաւնագրիտական ներկայացուցիչ՝ Թէքիւնսկիյ

№ 3

Բագու, արտաքին գործերի նախարարին

Լուրերի համաձայն, անգլիացիք Ղարսը յանձնել են հայերին, պատրաստուում են նրանց յանձնելու հակ Ծարուր—Նախիջևանը: Խնդրում եմ ստուգել և հարցնել անգլիացիներին. Եթէ ձիշտ է, ապա, կարծում եմ, անհրաժեշտ է ըողոցել Հիդրաստանի, Թուրքեստանի, Աւղանիստանի, Մալայիան կղզիների և Կովկասի օգջ մահմեդականների, հոյն պէս և Հարսութեան վեհաժողովի սոսջ անգլիացիների սյն չանկութեան դէմ, որով նրանք մի քանի միլիոն մահմեդականներին ենթարկում են թուով կէս միլիոն հայերին: Լուրերի համաձայն Զօրի շրջանում մահմեդականները դիմադրութիւն են ցոյց տալիս և կուր են բռնուել հայկական զօրքերի հետ: № 60, 16 ապրիլի 1919 թ.

Իրաւնագրիտական ներկայաց. Թէքիւնսկիյ

№ 4

Շտապ

Թիֆլիս, Աղբբէջանի հանրապետութեան արտաքին գործերի նախարար Զաֆարովին

Սպասում է անգլիական դեսերալ Միլնի մեկնումը Նախիջևան, դրա հետ զուգընթաց, Հայաստանը

մայիսի 3-ին պէտք է նբատարակէ մի յայտարու-  
թիւն այն մասին, որ դաշնակից միաստայի համա-  
ձայնութեամբ Հայաստանը զբաւում է Նախիջևանը  
Ղարսի նման և որ մուսուլմանները համարում են  
հաւասար իրաւունքներով օժտած քաղաքացիներ:

Անդլիացիների հրամանով մեր սպաները հե-  
ռացան Նախիջևանից: Աճ 71, 29 ապրիլի 1919 թ.

Իրանագիտական ներկայաց. Թէքինսկիյ

—  
№ 5

Շտապ

Բազու, արտաքին գործերի նախարարին

Եթէ Նախիջևանը դիմադրութիւն ցոյց տայ  
հայկական զօրքերին, ապա կտոաւարութիւնը ինչ  
օգնութիւն ցոյց կտայ և կուղարկէ արդեօք զօրքեր,  
թէկուզ կամաւորների անւան տակ: Այսօր դալու է  
գեն. Միլնը: Շտապ հեռագրեցէք պատասխանը,  
սպասում եմ: Աճ 72, 29 ապրիլի 1919 թ.

Իրանագիտական ներկայաց. Թէքինսկիյ

—  
№ 6

Շտապ

Բազու, արտաքին գործերի նախարարի օգնականին

Յանձնեցէք քարտուղարին 100 հազար՝ միաստայի  
պէտքերի համար և 40 հազար, ընդամենը 140 հազար՝  
և ասացէք, որ անմիջապէս վերադառնայ: Մուսուլ-  
ման ազգային խորհուրդը խնդրում է 400 հազար. Հա-  
յաստանի պարլամենտի ընարութիւնների համար. իմ  
խնդրած 40 հազարը դրա համար է: Աճ 73, 30 ապ-  
րիլի, 1919 թ.::

Իրանագիտական ներկայաց. Թէքինսկիյ

№ 7

Շտապ

Բազու, նախարարապետին

Գեներալ Միլնը և Տոմսօնը վերադարձան Թիֆ-  
լիս. խնդրում հմ նրանց հետ բանակցէք Նախիջևա-  
նի հանելուկային խնդրի մասին և ձեռք տոնէք ան-  
հրաժեշտ միջոցներ: Իմ բողոքները կլինեն անօգուտ  
և վաղաժամ, քանի որ Նախիջևանի շրջանին վերա-  
բերող հրամանը՝ ստորագրած անգլիական գեներալ  
Իեվիթի և Երեանի զօրամասի պետ Դրօյի կողմից՝ դեռ  
նրատարակւած չէ: Աճ 74, 1 մայիսի 1919 թ.

Իրանագիտական ներկայաց. Թէքինսկիյ

—  
№ 8

Բազու, նախարարապետին

Ապրիլի 30-ին ժամանեցին Մակինսկին (Գա-  
նիզադէ) և Նախիջևանսկին: Տոմսօնը Երեւանում  
արգելեց Մակինսկուն անցնել Նախիջևան, այն պատ-  
ճառարանութեամբ, թէ այդ շրջանը գտնւում է Հա-  
յաստանի կառավարութեան վարչութեան ներքոյ:  
Մակինսկին դրամները յանձնեց ինձ. սպասում եմ  
ցուցումների, թէ ինչպէս գործադրեմ Նախիջևա-  
նին յատկացւած դրամները: Նախիջևանսկին հար-  
կազրւած է վերադառնալ: Անգլիացիները Մակինսկու  
վազօնը վերցրին: Աճ 75, 1 մայիսի 1919 թ.

Իրանագիտական ներկայաց. Թէքինսկիյ

—  
№ 9

Բազու, նախարարապետին, պատճէնը՝ արտաքին գոր-  
ծերի նախարարի օգնականին

Իէսի Նախիջևան անցան հայկական գնդերը:

Հայաստանի վրայ ճնշում գործ դնելու համար անհրաժեշտ եմ գտնում, որ անյապաղ մեր գնդերը կենտրոնացեն հայկական սահմանների վրայ: Նախիջևանի սզգաբնակութիւնը պատրաստ է զիմադրութիւն ցոյց տալ, միայն վախենում է, որ անզլիացիք միջամտեն յօգուտ հայերի: Մայիսի 2-ին գեներալ Դիվին Երեւանից մեկնեց Նախիջևան: Դիվինում կանգնած է միայն չորրորդ գունդը՝ թերի կազմով: № 82, 4 մայիսի, 1919 թ.

Դիւանագիտական ներկայաց. Թէքինսկիյ

№ 10

Բազու, նախարարապետին, պատճէնը՝ արտաքին գործերի նախարարին

Շտապ պատասխանեցէք սպրիլի 29-ի № 72 հեռագրիս: Նախիջևանցիները ինձ հարցնում են՝ ինչպէս վարել և, արդեօք, Ալքրբէջանը օգնութեան կզանջ, եթէ նրանք հայերին զիմադրութիւն ցոյց տան: № 83, 4 մայիսի 1 19 թ.:

Դիւանագիտական ներկայաց. Թէքինսկիյ

№ 11

Երեւան, դիւանագիտական ներկայացուց. Թէքինսկուին

Իէպի Նախիջևան զօրամասեր և կամուրներ ուղարկելու մասին ներկայումս խօսք լինել չի կարողայդ հարցը հոանդուն կերպով քննուում է կառավարութեան և Աւագների Խորհրդի մէջ: Հետևանքի մասին կհաղորդեմ: Նոանդուն կերպով բողոքեցէք Նախիջևանը գրաւելու նպատակով ձեռնարկած ամեն

տեսակ գործողութիւնների և Ալքրբէջանի ինքնիշխան իրաւունքների նսեմացման դէմ: № 36, 5 մայիսի, 1919 թ.:

Ի սեղի արտաքին գործերի նախարարի՝  
Չխաթխանով

№ 12

Շտապ

Երեւան, Ալքրբէջանի դիւանագիտական ներկայացուցիչ Թեքինսկուին

Անյապաղ կապ հաստատեցէք Ղարսի կառավարութեան հետ: Յոյց տւէք նրան ամեն տեսակ աջակցութիւն, իմացէք թէ ինչ կարլքնիր ունի, հեռագրեցէք մեզ՝ անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելու համար: Հաստատ պնդեցէք, որ վերագրաւեն գերիկանայք, բողոքեցէք Ալքրբէջանի տերիտորիան — Գեօզլայի շրջանը զօրքեր ուղարկելու դէմ: Ամենի մասին հաղորդեցէք դաշնակից հրամանատարութեանը: մենք անզլիացիներին արդէն հաղորդեցինք: № 658, 6 մայիսի 1919 թ.:

Նախարարապետ՝ Խոյսկի

№ 13

Բազու, արտաքին գործերի նախարարին

Մինչև մայիսի 7-ը հայկական զօրքերը դեռ չեն անցել սահմանը, այսինքն՝ «Գայլի Իրունքը»: Մուսուլմանները Սաղսրակ գիւղի մօտ գնդացիներով պաշտպանում են Գայլի Իրունքը: Մինչև ապրիլի 27-ը պինդորական կցորդն ու զօրծավարը պէտք է Նախիջևան լինէին, բայց նրանցից դեռ անգնելութիւն չէ ստացւած: № 90, 9 մայիսի 1919 թ.:

Դիւանագիտական ներկայաց. Թէքինսկիյ

№ 14

Շտապ

Բազու, արտաքին գործերի նախարարին

Մայիսի 28-ին հայկական զորքերը պետ չեն անցել Գայի Դրուշքը, ուր կանգնած են մուսուլմանները՝ դիմադրութիւն ցոյց տալու, եթէ անգլիացիք կանցնեն հայերի կողմը: Հայերը շարունակում են զորքեր կենտրոնացնել Դաւալուում: Հայերը, նոյնիսկ, Նախիջևանի աղմինիստրացիան նշանակեցին, բայց նրանց աւանտիւրան յաջողութիւն չունեցաւ նախօրօք ձեռք առնւած միջոցների շնորհիւ:

«Կազկազսկոյէ Սլովօի» մայիս 3-ի համարում տպւած է Նախիջևանի շրջանին տրւած հրամանը: Կապը կտրւած լինելու պատճառով Նախիջևանի գինւորական կցորդից տեղեկութիւն չունեմ: № 92, 9 մայիսի 1919 թ.:

Դիւանագիտական ներկայաց. Թէքինսկիյ

№ 15

Բազու, նախարարապետին, պատճէնը՝ արտաքին գործերի նախարարի օգնականին

Լուրերի համաձայն, անգլիացիները Շարուր-Նախիջևանի շրջանը յանձնում են հայերին, պայմանով, որ հայերը Ղարաբաղը ճանաչեն որպէս Ազրբեջանի մաս:

Այդ լուրը տարածել են հայերը, բայց կարծում եմ, որ Հայաստանին Ղարան էլ բաւական է. ինչպէս Հայաստանի այլ մասերում, այնպէս էլ Շարուր-Նախիջևանում մուսուլմանները սարսափելի կացութեան մէջ են, չի կարելի այդ շրջանի հոծ մահմեդականու-

թիւնը ենթարկել հայերին: Նրանց սարսափելի ծանր դրութեան մասին ես ապացոյցներ ունեմ: Այս ամէնը պէտք է բացատրել դաշնակից հրամանատարութեանը թիֆլիսում և միշտ համաձայնութեան մէջ լինել նրանց հետ, հակառակ դէպում մեր դիւանագիտութիւնը տանուկը տայ: № 93, 10 մայիսի, 1919 թ.:

Դիւանագիտական ներկայաց. Թէքինսկիյ

№ 16

Բազու, նախարարապետին

Բուլշեվիկների կողմից Բազուին վտանգ սպառնալը պատճառ բերեցէք և խնդրեցէք անգլիացիներին, որ Ղարսի թնդանօթները փոխադրեն Բազու: № 94, 10 մայիսի, 1919 թ.:

Դիւանագիտական ներկայաց. Թէքինսկիյ

№ 17

Բազու, արտաքին գործերի նախարարին

Քարտուղարին միք ուշացի և միասիայի պէտքերի համար յանձնեցէք նրան հարիւր հազար, նաև իմ ոռճիկը: Ես պարտական չեմ առանց ոռճիկի ծառայելու և ստանալու աւելի քիչ, քան միւս դիւանագիտական ներկայացուցիչները:

Գործի օգուտը նկատի առնելով, չպէտք է սահմանափակէք իմ ծախքերը: Եթէ իմ ծախսերը մեծ էք համարում, խնդրում եմ ինձ յետ կանչէք և փոխարինէք մարում, խնդրում եմ ինձ յետ կանչելու հետ պայմանաւորելով, մանաւանդ որ ես Սոյսկու հետ պայմանաւորուել եմ երկանում մի ամսից աւելի չմնալ: 12 մայիսի 1919 թ.:

Դիւանագիտական ներկայաց. Թէքինսկիյ

№ 18

Բազու, արտաքին գործերի նախարարին  
Մայիսի 14 ին սպասում է Նախիջևանի գրա-  
լուումը հայերի կողմից: Գոնէ հաղորդեցէք, հետաքը-  
քում է ձեզ Նախիջևանի հարցը: № 98, 14 մայիսի  
1919 թ.:

Դիւանագիտական ներկայաց. Թէքինսկիյ

№ 19

Երևան, դիւանագիտական ներկայաց. Թէքինսկուն

Հանգումանքների բարդացման հետեանքով, նա-  
խիջևանցիները մօտ ապագայում չեն կարող սպասել  
մեզնից իրական զինւորական օգնութիւն: Եթէ տե-  
ղական բնակչութիւնը կարող է կանգնեցնել հայկա-  
կան զօրքերի առաջացումը, ապա այդ ուրախութեամբ  
կընդունել Ադրբէջանի կողմից, մանաւանդ, որ Ղալա-  
բադի հայերը՝ չնայած անգլիացիների ներկայութեան,  
որոնք եկել են Գարաբաղ մեզ աջակցելու՝ կտրականա-  
նապէս ընդդիմանում են Ադրբէջանի իշխանութեանը  
այնտեղ հաստատելուն: № 38, 18 մայիսի, 1919 թ.:

Ի տեղի արտ. գործ. նախարարի՝ Զիաթխանով

№ 20

Բագու, արտ. գործ. նախարարին

Ի՞նչ դրութեան մէջ է կամուտրական Բանակը:  
Որևիցէ պատճառ բանելով յետաձգէք Հայաստանի  
երկաթուղիների համար մագուի ուղարկելը, որովհե-  
տեւ Նախիջևանի շրջանում գէպքեր են սպասում:  
Անգլիական զօրքերը հեռանում են, նրանց բրիգադներ.

րից մէկը կկանգնի Գորի քաղաքում: Ի՞նչ պետք է  
ձեռնարկել անգլիացիների՝ Զանգեզուրի մասին արած /  
վճար սոթիւ: № 129, 4 յունիսի 1919 թ.:

Դիւանագիտական ներկայացուցիչ՝ Թէքինսկիյ

№ 21

Բագու, արտաքին գործերի նախարարին

Կամուտրական Բանակի առաջխաղացումը հայե-  
րին ուրախութիւն է պատճառում, որովհետեւ յոյս ու-  
նեն, թէ Բագուն կգրաււի, թէպէտ յունիսի մէկին ինձ  
մօտ ճաշին Խատիսեանը հաւատացնում էր, որ անկա-  
խութիւնը պաշտպանելու հարցում Ադրբէջանի և Հա-  
յաստանի շահերն ընդհանուր են: Եթէ մեր յարաբե-  
րութիւնը կամաւորական Բանակի հետ լարելի, հայերը  
ղէպի մեզ թշնամական դիրք հրոնեն, ուստի անհրա-  
ժեշտ է Հայաստանի համար Ծարուր-Նախիջևանում  
ստեղծել վտանգ. գործը կազմակերպելու համար պէտք  
է անյապաղ գրքւմ բաց թողնել: Ի՞մ ձեռք առած մի-  
ջոցների շնորհիւ, Ծարուրը, Նախիջևանը և Օրգու-  
բատը արգէն միացել են մէկ ազգային խորհրդի մէջ:  
որը ինձ հետ մշտական յարաբերութիւն ունի:  
№ 130, 4 յունիսի, 1919 թ.:

Դիւանագիտական ներկայացուցիչ՝ Թէքինսկիյ

№ 22

Դիւանագիտական ներկայացուցիչ՝ Թէքինսկուն

Պատասխան № 130 հետաքրի. Հաւանութիւն եմ  
տալիս Ծարուր-Նախիջևանի հետ կապ հաստատելու  
նպատակով ձեր ձեռնարկած միջոցներին. համաձայն  
եմ միջոցներ աւել զինւորական կազմակերպութիւն-  
ների համար: Հաղորդեցէք՝ ինչպէս և ո՞ւմ բաց թող-

նել դրամը: Հաղորդեցէք, թէ թնչ միջոցներով պիտի  
իրագործուին մասնանշած ծրագիրն ու կազմակեր-  
պութիւնները: № 1509, 8 յունիսի, 1919 թ.

Արտաքին գործերի նախարար՝ Զաֆարով

№ 23

Շտապ

Բազու, արտաքին գործերի նախարարին

Պատասխան № 1599 հեռագրի: Շարուր-Նախիջև-  
ւանի շրջանն ունի մօտ վեց հազար կիսահանոնաւոր  
զօրք՝ հեծելազօրով, թնդանօթով և դնդացիքներով:  
Ռազմունակութեամբ յետ չեն ֆուռ կայերից, որոնց  
օժանդակում են անդիպացիները: Պատերազմական  
գործողութիւնների ժամանակ զինուած ոյժերի թիւը  
կարող է հասնել մինչև 10 հազարի: Կարծում եմ, որ  
մենք պէտք է պահենք միայն վեց հազար ասկեաթ կին  
հրամանատարական կազմի հետ միասին, տեղաւորե-  
լով նրանց այն վայրերում, ուր գտնուում էին մինչև  
հայերի գալը, իսկ մի մասն էլ Զանգեզուրի սօււմանի  
վրայ՝ լեռներում: Ծախսերի ստուգութիւնը լիովին  
հրաշխաւորելի դժւար է: Գործի կարեւորութիւնն ստի-  
պում է, որ հաշուենք մի քանի հնարաւոր զեղծու-  
մաների հետ: Իրամը հրամանատարներին բաց կթողնեմ  
մաս-մաս, բացի այդ, վերահսկիչներ կը նշանակեմ: Վա-  
ղը գուրս է գալիս զինւորական կցորդը, լսեցէք նրա  
զեկուցումը և միասին քննեցէք: Այսօր սուրհանդակ  
ուղարկեցի Նախիջևան: № 150, 11 յունիսի, 1919 թ.

Իրևանագիտ. ներկայացուցիչ՝ Թէքինսկիյ

№ 24

Շտապ

Բազու, նախարարապետին, պատճէնը՝ արտաքին գոր-  
ծերի նախարարին

Մինչև որ Հայաստանը մուսուլման գիւղացիներ-  
բին չտեղաւորէ իրենց գիւղերում և չվերադար-  
ձնէ նրանց հողերը,—որ կապալով են տրւած,—ոչ մի  
ֆոնետ նաւթ և մազութ քաց չթողնէք:

№ 151, 11 յունիսի, 1919 թ.

Իրևանագիտ. ներկայացուցիչ՝ Թէքինսկիյ

№ 25

Բազու, նախարարապետին, պատճէն՝ արտաք. գործերի  
նախարարին

Զինւորական կցորդը տեղեկութիւններ բերեց  
Հայաստանի ոյժերի մասին: Հայաստանն ունի երեք  
հետեակ բրիգադ, իւրաքանչիւրը բաղկացած է երկու  
զնդից: Գնդերից իւրաքանչիւրը բաղկացած է երեք  
գումարտակից: Երեք ձիաւոր գունդ, իւրաքանչիւրը  
վեց էսկադրօնով, բայց բոլոր էսկադրօնների կազմա-  
ւորումը դեռ չէ վերջացել: 12 մարտկոց, իւրաքան-  
չիւրը չորս թնդանօթով, Բացի զրանից, կայ մէկ  
Վարաբադի շոկատ, բաղկացած մէկ գումարտակից,  
երեք էսկադրօնից և 4 թնդանօթից: Ղարսում մօտա-  
ւոր կաշտով կայ 500—700 թնդանօթ՝ ութ գիւլմանո-  
ցից մինչև զաշտային, որոնց վրայ սպաներ ու ծա-  
ռայողներ չկան: Երեք զրահապատ գնացք:

№ 153, 12 յունիսի, 1919 թ.

Իրևանագիտ. ներկայացուցիչ՝ Թէքինսկիյ

№ 26

Երևան, Ադրբեջանի դիւանագիտ. ներկայացուցիչ Թէքինսկուն

Շտապ հաղորդեցէք Նախիջևանի, Շարուրի, Վէգիբասարի, Գողթանի և Օրդուբադի գրութեան մասին: Զուլֆան իրանց ձեռքին է: Վէգիբասարի գայմագամ Սալի Ադա Լաջիարովի և Աբաս Կուլի ադա Շադինսկուն ազատելու համար սջակցութիւն ցոյց աւէք: № 1695, 17 յունիսի, 1919 թ.

Ի տեղի արտաքին գործերի նախարարի

Զիաթխանով

№ 27

Շտապ

Բագու, արտաքին գործերի նախարարին

Պատասխան № 1695 հեռագրի: Նախիջևանի, Շարուրի, Վէգիբասարի և Շահթախտի շրջանները գրաւած են հայկական զօրքերով և հաստատուած է հայկական վարչութիւն: Նախիջևանի Ադգային Սորհուրդը խնդրում է ինձ հաղորդել դաշնակից հրամանատարութեանը, որ հայկական իշխանութիւնները, հակառակ անվրիակաւ դիմելու Դեվլի և Սաթխովի խոստման, սկսել են խուզարկութիւններ անել և զբաւում են զէնքեր, կահկարասի, գերաններ, տախտակներ և ուրիշ իրեր և խնդրել, որ դաշնակից հրամանատարութիւնը վերջ տայ նման գործողութիւններին: Զուլֆան հայերի ձեռքին է: Նախիջևանեան Միութեան խնդրը հնարաւոր էր գտնուում կատարել: Հայերի մուտքը Օրդուբադ չի թոյլատրուում. այդ մասին դեռ 11 օր տալ օրդուբադցիները որոշ կեր-

պով յայտարարեցին հայերին: Մուսուլման զօրքը ցրած է: Մնացել են միայն 300 պարտիզաններ: № 184, 20 յունիսի, 1919 թ.

Դիւանագիտ. ներկայացուցիչ՝ Թէքինսկիյ

№ 28

Բագու, արտաքին գործերի նախարարին

Խնդրում եմ մանրամասն հարց ու փորձ անել զինուորական կցորդին և հրահանգներ առք ՚հրան Շարուր-Նախիջևանի զինուորական կողմակերպութիւնների մասին: Իր ժամանակին նիւթական օժանդակութիւն չհասնելու պատճառով, մուսուլմանական զօրքերը ցրեցին, բացի 300 պարտիզաններից: Թուում է, որ այժմ Ադրբեջանը Հայաստանից բացի՝ ուրիշ թշնամի չունի, ուստի անհրաժեշտ է Հայաստանի վրայ առանձին ուշադրութիւն դարձնել: Պէտք է քիւրդ Սմկոյին քաշել մեր կողմը, որի համար խնդրում եմ ինձ լիազօրութիւն և զինուորական կցորդին հարց ու փորձ անել Սմկոյի մասին

№ 202, 22 յունիսի, 1919 թ.

Դիւանագիտ. ներկայացուցիչ՝ Թէքինսկիյ

№ 29

Շտապ

Բագու, արտաքին գործերի նախարարին

Բէիւք-Վէդիի գրութիւնը յուրջ է, Հայաստանը կենտրոնացնում է իր բոլոր ոյժերը: Յայտարարւած է զօրահաւաք: Քահանաներն իրենց քարոյներում կոչ են անում յարձակել Բէիւք-Վէդիի վրայ, համարելով այդ սրբազան արշաւանք: Մուսուլմաններին կարող

է ազատել Ադրբէջանի զինուած միջամտութիւնը: Եթէ հայկական զօրքերը վերցնեն գիւղը, կը կոտորեն բոլոր մահմեդականներին. այդ պատճառով վերջիններս յամառօրէն պաշտպանուած են: Մահմեդականների յամառ դիմադրութիւնը անգլիացիներին կատաղեցրել է: Կռիւը շարունակուած է: Մահմեդականների դիմումին՝ օգնութեան համար, յայտարարեցի, որ առայժմ Ադրբէջանը չի կարող օգնել զօրքով, բայց մահմեդականների բոլոր ծախքերն ու վնասներն անմիջապէս կվերադարձեն Ադրբէջանի կողմից:

Սպասուում են մեծ դէպքեր ամբողջ Շարուր-Նախիջևան. Օրդուբադում և Դարսի շրջանում: Առանց մի օր կարցնելու ուղարկեցէք խոշոր զո՛ւմար՝ զինուորական կազմակերպութիւնների համար: № 420, 14 յուլիսի, 1919 թ.

Դիւանագիտ. ներկայացուցիչ՝ Թէքինսկիյ

№ 30

Թիֆլիս, զինուորական կցորդ՝ գնդ. Մանսէդ բէգ Ալիեիւն

Հայաստանն ունի երեք հետեակ բրիգադ, իւրաքանչիւրը բաղկացած երկու գնդից, Գուռն ունի երեք գումարտակ: Երեք ձիաւոր գոռնդ, իւրաքանչիւրը բաղկացած վեց էսկադրօնից, բայց բոլոր էսկադրօնների կազմակերպումը դեռ չէ վերջացել: 12 մարտից՝ իւրաքանչիւրը 4 թնդանօթով: Բացի դրանից կայ մէկ Դարաբազի ջոկատ, բաղկացած մէկ հետեակ գումարտակից, երեք էսկադրօնից և 4 թնդանօթից: Դարսում մօտաւոր հաշուով կայ 500-ից աւելի թնդանօթ՝ 8 դիւլմանոցից մինչև դաշտային, որոնց վրայ սպաններ և ծառայողներ չկան, Երեք զբահապատ

գնացք: Ներկայումս ուժեղ զօրահաւաք կայ: Կարծում են, որ միայն զօրահաւաքով կարող են լրացնել մասնաշաճ գնդերի քանակը, որովհետև պատարութիւն շատ կայ: Խնդրում եմ այս ամէնը հաղորդէք զինուորական նախարարին:

№ 432, 16 յուլիսի, 1919 թ.

Դիւանագիտ. ներկայացուցիչ՝ Թէքինսկիյ

№ 31

Երևան, գիւանագիտական ներկայացուցիչ՝ Թէքինսկուն

432, Եթէ հնարաւոր է, պարզեցէք, թէ որտեղ են կանգնած զօրամասերը. հեռագրեցէք: № 2907, 18 յուլիսի, 1919 թ.

Զինուորական կցորդ՝ Ալիե

№ 32

Թիֆլիս, Ադրբէջանեան միասիա, զինուորական կցորդ՝ Ալիեիւն

Բացի վեց հետեակ գնդերից, կայ նաև եօթերորդը, որ կազմուած է միլիցիօն գոռնդ. կան նոյնպէս սահմանապահ բրիգադներ ու Զօրական Շարի զօրամաս: Զանգեզուրում կան հայկական զօրամասեր, բայց նրանց թիւը յայտնի չէ: № 447, 19 յուլիսի 1919 թ.

Դիւանագիտ. ներկայացուցիչ՝ Թէքինսկիյ

№ 33

Երևան, գիւանագիտական ներկայացուցիչ՝ Թէքինսկուն

Հետևեցէք Բէիւք-Վէլիում և միւս գիւղերում

կատարող զէպիսկոպոսն, եթէ հնարաւոր է, ուղարկեցէք պաշտօնական ներկայացուցիչ, հակառակ պարագային նշանակեցէք գաղտնի գործակալ: Դէպքերի մասին հազորդեցէք:

№ 46, 19 յուլիսի, 1919 թ.

Արտաքին գործոց նախարար՝ Զաֆարով

№ 84

Թիֆլիս, Ազրբեջանի միսսիա, զինուորական կցորդ՝ Ալիեխի

Հինգերորդ գունդը կանգնած է Ղարսում, չորրորդը՝ Սանահինում, Դիլիջանում և Նոր-Քայազևում, վեցերորդ գունդը՝ հաւանօրէն, Ալեքսանդրապօլի շրջանում և Սուրմալուի գաւառում: Վեղիքասարի, Շարուրի և Նախիջևանի շրջաններում են գտնուում եօթերորդ գնդի ա. բ. և գ. մասերը, սահմանապահ բրիգադի մէկ մաս, Զորական Շտաբի մէկ վաշտի սմբաձիգ մաս, երկու զրահապատ գնացք, հեծելազօր, և լեռնային մարտկոցների փոքրաթիւ մասեր: Երևանում կայ մէկ մարզադ խումբ և Երևանեան Առանձին Գուժարտակը: Ղարսազի ջոկատը գնդապետ Կաֆիւի հրամանատարութեամբ, հաւանօրէն, անցել է Զանգեզուր: Հեծելազօրը կանգնած էր Ալեքսանդրապօլում, բայց թէ այժմ թրտիկ է, — դժուար է պարզել քանի որ միայն երեք էսկադրօնը ունեն ձիեր, միւսները ձիեր չունեն:

Պատերազմական գործողութիւնների հետևանքով, զօրամասերի դասաւորութիւնը ենթարկուում է փոփոխութեան:

Զօրավար Շելկովնիկովի գաղտնի հրամանները՝

ուղղւած գնդերի հրամանատարներին, բունւած են և ուղարկւած Շարուր Նախիջևանի մահմեդականներին ի տեղեկութիւն. այդ մասին կայերը հաւանօրէն չը գիտեն:

№ 461, 21 յուլիսի, 1919 թ.

Դիւանապետ. ներկայացուցիչ՝ Թէքինսկիյ

№ 35.

Շտապ

Բագու, արտ. գործ. նախարարին

Զանգեզուրում կան Հայաստանի զօրամասեր, որոնք, Կիլիկի անցքով շարունակուած են կապ պահպանել Հայաստանի իշխանութիւնների հետ: Խնդրում եմ ինձ իրազեկ պահէք քաղաքական անցուղաւորին, յատկապէս Հայաստանին վերաբերող խնդիրներին:

Վրաստանի կառավարութեան կից զիւանազիտական ներկայացուցչի կողմից գեներալ Կօբիին արւած յայտադրի մասին թերթերից տեղեկացայ պատահաբար: Այդ յայտադրուած անտեղի կերպով յիշւած է, որ իբր թէ դաշնակից պետութիւնները Շարուր-Նախիջևանի շրջանը յանձնել են Հայաստանին: Նման պաշտօնական ակտ ինձ յայտնի չէ և, հաւանօրէն, Հայաստանին նման մանդատ չի տրւած: Ես գալիս եմ այն եզրակացութեան, որ Շարուր-Նախիջևանը Հայաստանին կցելու առաջարկին չեն տւել իրենց համաձայնութիւնը ոչ միայն դաշնակից պետութեանց կառավարութիւնները, այլ և, նոյնիսկ, անգլիական հրամանատարութիւնը: Նոյնը կարելի է ասել նաև Ղարսի շրջանի մասին: № 469, 21 յուլիսի, 1919 թ.:

Դիւանապետ. ներկայաց. Թէքինսկիյ

№ 36.

Շտապ

Բազու, արտաքին գործերի նախարարին

Այսօր տեղս հասած մարդիկ հաղորդում են, որ Շարուրում սպասւում են դէպքեր և որ հայերը մահ-մեղականների երթևեկութիւնը երկաթուղագծով արգելում են հայերը մի քանի գիւղերից փախել են Կանթուզլի գիւղը: Ջալալինսկին ասելուս է քրդերի կողմից: Սպասւում են խոշոր դէպքեր: Հայաստանը լա-րում է իր բոլոր ոյժերը: Մահմեդականներին օգնելու համար պէտք է, որ մեր զորքերը քաշենք դեպի Հայաստանի սահմանները:

Մահմանների վրայ մեր զորքերի երևալը խուճապ կձգէ հայերի մէջ, կուժեղացնէ դատաբութիւնը և կը բանձրացնէ մահմեդականների ոգին: Հայաստանի զորքերի քանակի մասին արդէն հաղորդել եմ թիֆլիս, գինւորական կցորդ Ալիևին, խնդրելով, որ այդ մասին տեղեկացնէ զօրական նախարարին: Եթէ ուզում էք օգուել բոլորից, ձեռք օռէք շտապ և վճռական միջոցներ: Խնդրում եմ մեր կառավարութեան մտադրութիւնները հաղորդէք ինձ: Կրկին յայտնում եմ, որ մեր թղթի յայտագրերին ու բանաւոր միջամտութիւններին Հայաստանը ուշք չի դարձնում: Արալըխում դէպքեր են սպասւում: Մահմեդականները հազորդում են, որ հայերը սկսել են հաւաքել մահմեդականների կողմից լքած 12 գիւղերի հունձը: № 470, 21 յուլիսի, 1919 թ.

Իրևանագիտական ներկայաց. Թէքինսկիյ

№ 37

Շտապ

Բազու, արտաքին գործերի նախարարին

Ծն այն տպաւորութիւնն ստացայ, որ հայկական

զորքերը Բէիւք-Վէդիից չեն հեռանայ, այլ, կանգնելով միայն դիրքերի վրայ, կընդհատեն պատերազմական գործողութիւնները: Միջոցներ ձեռք առէք, որ հայկական զորքերը հեռանան, սպա թէ ոչ Բէիւք-Վէդիի մահմեդականների դրութիւնը կդառնայ ծանր և, նոյնիսկ, վտանգաւոր: № 499, 22 յուլիսի, 1919 թ.

Իրևանագիտական ներկայաց. Թէքինսկիյ

№ 38

Երևան, դիւանագիտական ներկայացուցիչ՝  
Թէքինսկուս

500,000 փութ ջուր ռզարկելու մասին Բէկուզականի արած միջնորդութեան հետևանքով (խեղաթիւրւած է) դաշնագրի Ապահովութեան խորհուրդը որոշել է նաւթ բաց չթողնել մինչև Ադրբէջանի կառավարութիւնը փոփոխութեան կենթարկէ գաշնագրի հաստատման երկու պայմանները: Այդ մասին հաղորդում եմ ձեզ: Հայերին չյայտնէք: № 54, 24 յուլիսի 1919 թիւ:

Արտաքին գործերի նախարար՝ Զաֆարով

№ 39

Բազու, նախարարապետին, պատճէնը՝ արտաքին գործերի նախարարին

Շարուր նախիջևանի շրջանում տեղի են ունենում խոշոր դէպքեր: Զինուորական կցորդ Ալիևին հազորդեցի հայկական զորքերի քանակի ու նրանց դատաբորութեան մասին՝ զօրական նախարարին տեղեկացնելու համար:

Հայաստանը շարունակում է զօրքեր ուղարկել  
Շարուր Նախիջևանի շրջանը: Օգնեցէք մահմեդական-  
ներին մեր զօրքերը դէպի Հայաստանի սահմանները  
չարժելով: № 485, 24 յուլիսի, 1919 թ.

Դիւանագիտական ներկայաց. Թէքինսկիյ

№ 40

Նրևան, գիւանագիտական ներկայացուցիչ  
Թէքինսկուն

Շտապ պարբերաբար և մանրամասը հաղորդե-  
ցէք գործերի քաղաքական դրութեան մասին: Զեր  
քարտուղարը եկաւ առանց որեէ գեկուցման: Որքան  
գումար պէտք է յանձնել նրան: № 879, 27 յուլիսի,  
1919 թ.

Արտաքին գործերի նախարարի օգնական՝

Զիւթխանով

№ 41

Բագու, նախարարապետին, պատճէնը՝ արտաքին գոր-  
ծերի նախարարին

Կարծում եմ, որ մեր կառավարութիւնը պէտք է  
վճռական առաջարկ անէ անդլիացիներին, մեզ յանձ-  
նելու Զուլֆա Շահթ սխտի երկաթուղին, Ալիաթ Զուլ-  
ֆա գծով, Պարսկաստանի հետ առևտուր սկսելու հա-  
մար: Յանձնման ենթակա) այդ գիծը պէտք է երկա-  
րի մինչև Իււալու գիւղը: Անգլիացիներին այդ ա-  
ռաջարկն անելու հետ միտժամանակ, մատնանցեցէք  
Հայաստանի անընդունակութիւնը, գնացքների եր-  
թևեկութեան յաճախակի ընդհատումը. ընդ սմին,

խոստացէք Շարուր Նախիջևանում նոր կարգ հաստա-  
տել: Կարծում եմ, անգլիացիք կհամաձայնեն: № 558,  
28 յուլիսի, 1919 թ.

Դիւանագիտական ներկայաց. Թէքինսկիյ

№ 42

Բագու, արտաքին գործերի նախարարին  
Շտապ միջոցներ ձեռք առէք՝ արգելելու հայերի  
ելքը, որոնք ցանկանում են փոխադրել Հայաստան:  
Կըրամ և կըրսցատրեմ, № 460, 30 յուլիսի 1919 թ.  
Դիւանագիտական ներկայաց. Թէքինսկիյ

№ 43

Բագու, արտաքին գործերի նախարարին  
Մահմեդականների գրութիւնը օրէցօր վատա-  
նում է:

Վերջապէս, թղթի յայտադրերից բացի, մենք  
պէտք է անենք իրական քայլեր: Ես այսօր յանձնեցի  
մի խիստ յայտադիր, որ պատասխան է Բէիւք Վէդիի  
դէպքերի մասին Բէկզօղեանի կողմից տրւած յայտա-  
գրին: Իմ յայտագիրը պատասխանում է Բէկզօղեանի  
յայտադրի բոլոր կէտերին, մատնանշելով նաև, թէ ինչ  
դրութեան մէջ են մահմեդականները Հայաստանում:  
Եթէ մենք ուզում ենք հանդատացնել կատաղած հա-  
յերին և փրկել բողոքութիւ մահմեդականների կեանքն  
ու ինչքը, ապա պէտք է անյապաղ պատերազմ յայ-  
տարաքենք: Ինչէք Վէդիի, Շարուրի և Նախիջևանի  
շրջաններում կռիւն՝ ր են տեղի ունենում: Հայկական  
գնդերը փախչում կամ սնչւանում են: Հաղորդեցէք, թէ  
ինչ պէտք է անւմ ես: Մահմեդականները դեռ չեն

ցանկանում Երևանը գրաւել: № 601, 1 օգոստոսի, 1919 թ.

Դիւանագիտական ներկայաց. Թէքինսկիյ

№ 44.

Երևան, դիւանագիտակ. ներկայաց. Թէքինսկուհ

Խնդրում եմ շտապ կերպով հաղորդէք, թէ ի՞նչ դրութեան մէջ են Հայաստանի գործերը: № 58, 2-ն օգոստոսի 1919 թիւ:

Արտաքին գործերի նախարար՝ Չափարով:

№ 45

Բազու, նախարարապետին, պատճէն՝ արտաք. գործ. նախարարին

Անհրաժեշտ է, որ Ադրբէյջանը երկու շաբաթւայ ընթացքում մաքրէ հաշիւները Չանգեղուորի հետ ու գործերն առաջացնէ մինչև Ղամաթը: Այժմ ամենաւ յարմար ժամանակն է: Հայաստանի կօմիսսար՝ ամե. ընկալան գնդապետի ժամանումից յետոյ, ուշ կը լինի: Եթէ իմ առաջարկը կընդունուի ձեր կողմից, ապա իրագործեցէք առանց պատերազմ յայտարարելու: Շատ խնդրում եմ, որ օգուէք ըսպէից և ժամանակ չկորցընէք: № 606, 3 օգոստոսի, 1919 թիւ:

Դիւանագիտական ներկայաց. Թէքինսկիյ

№ 46

Բազու, նախարարապետին, պատճէն՝ արտաքին գործերի նախարարին

Հայաստանը հրետանի և ռուսներ է ուղարկում

դէպի Դիլիջան, Նոր Բայազէտ և Բասար-Գեչար: Այսօր Երևանից եօթ բռնատար օթօմօթիլներով բուժ. բեր ուղարկեց Նոր Բայազէտի խճուղով: Ենթադրում եմ, որ Հայաստանը պատրաստութիւններ է տեսնում մահմեդականների դէմ: Մատնանշւած շրջաններում է գտնուում չորրորդ հետակ գունդը: Չեոք ատէք հարկաւոր միջոցները: № 616, 4 օգոստոսի, 1919 թիւ:  
Դիւանագիտական ներկայաց. Թէքինսկիյ

№ 47

Շտապ

Բազու, արտաքին գործերի նախարարին

Այսօր ժամանեց ամերիկ սկոն միսսիան, որ գտնում է Նախիջևան՝ ընդունելու շրջանի վարչութիւնը, որպէս չէզոք գօտի: Հիմնուում է Ադրբէյջանի կառավարութեան հետ կապած համաձայնութեան վրայ, բայց ոչ մի ապացոյց չի ներկայացնում: Որովհետև նրանց գալով Նախիջևանում կարող են խոշոր բարդութիւններ առաջանալ, խնդրում եմ շտապով հաղորդէք, թէ, իրօք, համաձայնութիւն կընւած է: որպէսզի յայտարարեմ այդ մասին Նախիջևանի ազգարնակութեան: Միսսիան և ազգարնակութիւնը անդիտութեան մէջ են: Պատասխանեցէք ծածկագրով: № 1135, 21 հոկտեմբերի, 1919 թ.

Դիւանագիտական ներկայաց. Հախվերով

№ 48

Երևան, Ադրբէյջանի դիւանագիտական ներկայացուցիչ Հախվերովին

Հասկելը բանակցութիւններ վարեց կառավարու-

Թեան հետ Շարուր-Նախիջևանի շրջանը չէզոք գօտի  
 յայտարարելու մասին: Համաձայնութիւն չկայացաւ,  
 որովհետեւ Հասկելը չենդունեց մեր պայմանները: Կա-  
 ուավարութիւնը յայտարարեց միայն, որ մնալով պաս-  
 սիւս գերի մէջ, զիմադրութիւն չի ցոյց տայ, եթէ Հաս-  
 կելը չէզոք գօտի հաստատէ: Հասկելի տեղակալ Աէյը  
 եկաւ Բագու. բանակցութեանց ընթացքում յայտնեց,  
 որ իրենք մի սպայ պիտի ուղարկէին Նախիջևան,  
 զրութեանը տեղում ծանօթանալու համար:

Այս հարցը մնում է նոյն գրութեան մէջ, ինչ  
 որ ձեր Բագու եղած ժամանակն էր: № 93, 23 հոկ-  
 տեմբերի 1919 թ.

Արտաքին գործերի նախարար՝ Զաֆարով

№ 49

Բագու, արտաքին գործերի նախարարին

Անհրաժեշտ է յայտնել գօլտ. Սուլթանովին,  
 որ Նախիջևան փամփուշտ և փող ուղարկելու մասին  
 հայերը նախազգուշացւած են: Ճանապարհի վրայ զըր-  
 ւած են պահակներ, ու մօտ օրերում յարձակում եղաւ  
 Հարւանի վրայ և կողոպտեց 400 մարդ: Մասնանշը-  
 ւած առարկաները երբէք չուղարկէք Մինքենդ և Խօշ-  
 բէկ գիւղերի վրայով:

Հայերը Երևանում տենդոտ աշխատանքի մէջ են.  
 ամեն օր Դիլիջանի և Զանգեզուրի ուղղութեամբ  
 փամփուշտ և սուսք է ուղարկուած: № 1204, 28 հոկ-  
 տեմբերի 1919 թ.

Դիւանագիտական ներկայաց. Հախվերդով

№ 50

Բագու, արտաքին գործերի նախարարին

Նախիջևանից ինձ գրում են, որ ազգաբնակչու-  
 թիւնը հրաժարեց ընդունել գնդ. Դիլիջան, որպէս նա-

հանգապետ: Երկար բանակցութիւններից յետոյ, գնդ.  
 Աէյը համաձայնեց գնդ. Դիլիջան թղթել որպէս Ամե-  
 րիկայի ներկայացուցիչ: Նա բացարձակապէս հրաժար-  
 ւեց խառնուել ներքին վարչութեան գործերին: Հասկե-  
 լի՝ ժողովրդին ուղղած կոչերը յետ են վերցւած:

Նամակի պատճէնը ուղարկեցի ձեզ: Մօտ օրերս  
 Նախիջևան անցաւ ուսական ծառայութեան գնդա-  
 պետ Խան Փիրա Այսովը, որպէս գնդ. Դիլիջան օգնական:  
 Ինչպէս ես լսեցի, նա նշանակւած է Հայաստանի կա-  
 ուավարութեան ցուցմունքով, համարում է Նախիջևա-  
 նի հայկական նահանգապետ և գաղտնի կիբայով ոռ-  
 ճիկ է ստանում Հայաստանի հանրապետութիւնից:  
 Այսօր Նախիջևանի գնդերալ նահանգապետին գաղտնի  
 նամակ ուղարկեցի, որ Խան Փիրա Այսովին շտապ հե-  
 ոացնեն Շարուր-Նախիջևանի շրջանից: Վէզիրբասարի  
 և Զանգիբասարի շրջանները առայժմ կղզիացած վի-  
 լորութեան մասին եղած լուրերն անճիշտ են: Ներքին  
 գործերի նախարարին ներկայացել են ինչ որ պատ-  
 գամաւորներ, բայց նրանք եղել են ինքնակոչ մար-  
 ղիկ, № 1234, 1 նոյեմբ. 1919 թ.

Դիւանագիտական ներկայաց. Հախվերդով

№ 51

Երևան, դիւանագիտական ներկայաց. Հախվերդովին  
 (Ստացւած է փոստով)

Նախազգուշական բոլոր միջոցները ձեռք առնե-  
 լով, հաղորդեցէք Զամալինսկուն, որ անհրաժեշտ է  
 գնդ. Դիլիջան հետ հաստատել բարեկամական յարաբե-  
 րութիւններ, և որ նրանց բնած զիբքը կաուավարու-  
 թեան կողմից հաւանութիւն է գտնում: Ծածկազիրը

ձեզ մօտ պահեցէք, ոչ ոքի մի տւէք և եթէ կյան-  
ձնէք քարտուղար Միքէլաքեան, սեղեկացրէք: № 105  
9 նոյեմբ. 1919 թ.

Արտաքին գործերի նախարար՝ Զաֆարով

№ 52

Շտապ

Յրևան, Ազրբէջանի դիւանագիտական ներկայաց.

Հախվերգովին

Մեր և հայկական կառավարութեան միջև կայա-  
ցաւ համաձայնութիւն այն մասին, որ տերրիտօրիալ  
վիճելի հարցերը ենթարկեն դեկտեմբերի 2-ին հրա-  
ւիրուելիք կօնֆերենցիայի վճշին. այդ պատճառով  
խօսարկեցէք կառավարութեան և ազգաբնակչութեան  
միջև միջնորդի դեր կատարելուց, ինչպէս այդ տե-  
ղի էք ունեցել զանգիբասարցիների վերաբերմամբ:  
26 նոյեմբերի, 1919 թ.

Արտաքին գործերի նախարար՝ Զաֆարով

№ 53

Բագու, արտաքին գործերի նախարարին

Դիւղական ջօջանների կազմակերպումից յետոյ,  
միջնորդութեան մասին այլևս խօսք չկայ: Ամիս ու  
կէս առաջ տեղի ունեցած իմ միջամտութիւնը հետե-  
ւանք էր թողել պահանջի: Մանրամասն զեկուցումը  
կուղարկեմ առաջին իսկ սուրհանդակով: № 1715, 28  
նոյեմբ. 1919 թ.

Դիւանագիտ. ներկայացուցիչ՝ Հախվերգով

№ 54

Յրևան, դիւանագիտ. ներկայացուցիչ՝ Հախվերգովին  
(Թիֆլիսից)

Այստեղ ամերիկացիները տեղեկութիւն են ստա-  
ցել, որ իբր թէ մահմեդականները պատրաստոււմ են  
Նախիջևանի կողմից յարձակում գործել Յրևանի վրայ:  
Ենդրում եմ հաղորդէք ինձ, թէ այդ առթիւ ինչ է  
յայտնի ձեզ:

Հաղորդեցէք, թէ Հայաստանի պատերազմները  
երբ պիտի մեկնեն Բագու, կօնֆերենցիային մասնակ-  
ցելու համար: № 117, 3 դեկտ. 1919 թ.

Դիւանագիտական ներկայացուցիչ  
տեղակալ՝ Վէրիլով

№ 55

Գաղտնի

Յրևան, Ազրբէջանի դիւանագիտական ներկայացուցիչ  
Հախվերգովին  
(Թիֆլիսից)

Մօտ օրերս Յրևան է գալիս ռուսորիական կա-  
պիտան՝ Յնդանօթաձիգ Անտօն Մարակուտին: Նա մը-  
տադիր է անցնել Խալիլ բէյի բանակը: Աջակցութիւն  
ցոյց տւէք նրան, եթէ անհրաժեշտ կը համարէք:  
№ 120, 5 դեկտ. 1919 թ.

Դիւանագիտական ներկայաց. տեղակալ՝  
Վէրիլով

Ծանօթ. - Հայաստան հասնելուն պէս, կապիտան  
Մարակուտին ձերբակալեց միլիցիայի կողմից և այ-  
նուեան յանձնուեց Հայաստանի հանրապետութեան  
զին. դատարանին, ջրէական պատժազրքի 108 և 119  
յօդածններով. նախատեսուած յանցանքի մէջ մեղադրու-  
ելու համար: Զին. դատարանը 1919 թ. դեկտեմբերի

31-ի դժբարաց դատաստանական նիստում քննելով գործը, Անտոն Մարտիկոտիին ճանաչեց յանցաւոր ներկայացւած մեղադրանքի մէջ և դատաւարտեց նըրան տտժանակիր աշխատանքների, 15 տարի ժամանակով:

№ 56

Գաղտնի

Բագու, արտաքին գործերի նախարարին

Նախիջևանի ազգաբնակչո՛րեան խնդիրը յարգելով, վաղը ձեկնում եմ թիֆլիս: Մանրամասնութիւնները այնտեղից կը հաղորդեմ: № 1793, 12 դեկտեմ. 1919 թ.:

Իլեանադիաական ներկայաց. Հասկիւրդով

№ 57

Յ. գաղտնի

Բագու, արտաքին գործերի նախարարին

Եթէկ ստացայ Նախիջևանի հահանդապետի նամակը: Ձեզ զեկուցում եմ նամակի մի մասը, ինչդրում եմ հեռադրէք ինձ ձեր ձեռք առած միջոցները, Նախիջևան հաղորդելու համար: Պարսկաստանը մեծ խտտութիւնով, գայթակցեցուցիչ միջոցներով զրաւում և նրադուրում է Նախիջևանի շրջանի գաղթականներին: Եթէ գաղթականները, որոնց թիւը հասնում է 60 հազարի, անցնեն Պարսկաստան, ապա հայերը կտիրեն այդ երկրամասերը, կմխանան Չանդեզուրին և կսղառնան Բագուին: Գաղթականները սարսափելի տանջանքների մէջ կոտորում են հարիւրներով թաւրից և ցրտից: Անգլիացիները, օգտուելով իրե-

րի այդպիսի դրութիւնից, ցանկանում են գաղթականներին այդ մեծ բանակի տեղափոխութեամբ թուրացնել երկիրը՝ հայերի ներսխուծման համար: Այդ ինձ հաստատ յայտնի է: Եթէ կառավարութեան համար թանկ է այդ երկրամասի պահպանումը, ապա թող անյազազ դրամ և մարդիկ ուղարկէ՝ փրկելու գաղթականներին կեանքը և պահելու նրանց տեղում: № 1859, 20 դեկտ. 1919 թ.:

Ի տեղի ներկայացուցչի՝ Միրբաբակ

№ 58

Յ. գաղտնի

Բագու, արտաքին գործերի նախարարին

Նախիջևանից գրում են, որ եթէ գանգիրաստացիք անձնատուր լինեն, ապա մենք քաղաքական, բարոյական և նիւթական տեսակէտից շատ բան կը կորցնենք: Խնդրում եմ ամեն ջանք դործ դնել, որպէսզի հայերի յարձակումը՝ գանգիրաստացիների վերայ՝ յետ շարտի: Նրանց կողմից բոլոր հնարաւոր միջոցները ձեռնարկւած են: № 1860, 20 դեկտ. 1919 թ.

Ի տեղի ներկայացուցչի՝ Միրբաբակ

№ 59

Բագու, արտաքին գործերի նախարարին

Խնդրում եմ հաղորդէք թիֆլիս՝ Վէլիլ վին, որ նրա Երևան ուղարկած № 120 ծածկագիր հեռագիրը հայերի կողմից բացւած է: Աւտարկացի սպան ձերբակալւած է: Երէկ հաղորդեցին, որ Չինուորական Դա-

տարանը նրան դատապարտել է 15 տարւայ տաժա-  
նակիր աշխատանքներին: Անհրաժեշտ է, որ Վէրբլովը  
պարզէ, թէ հայերին ինչպէս է յաջողել ծածկագիրը  
բանալ և ուղարկէ մեզ մօտ ծածկագիր: Խնտիւովը  
այդ մասին յայտնել էր Հախովերգովին, բայց նա, ինչ-  
պէս երևում է, մոռացել է թիֆլիսում Վէրբլովին  
նախազգուշացնել, ընդհակառակը, հէնց ինքը նոյն  
ծածկագրով հեռագիր է ի վել Երևան: № 1864, 22-ն  
դեկտ. 1919 թ.:

Ի տեղի դիւանագիտ. նիւրկայաց. Միրբաբան

№ 60

Երևան, Ագրբէջանի գիււանագիտ. ներկայացուցչին  
(Նախիջևանից հնդ-եւրոպական հեռագրաթերով)

I. Խնդրում եմ պաշտօնապէս հաղորդէք, թէ ճիշտ  
է արդեօք, որ Հաշտութեան Խորհրդաժողովը ճանա-  
չել է Կովկասեան հանրապետութիւնների անկախու-  
թիւնը. այդ մասին այստեղ յամառ լուրեր են պըտ-  
տում:

II. Որովհետև հաղորդակցութիւն չկայ, ուստի,  
խնդրում եմ, դուք յայտնէք իմ գլխաւոր Խորհով բէկ  
Սուլթանովին, որ երկրի գաղթականները սարսափե-  
լի տանջանքի մէջ կոտորում են քաղցից և ցրտէց:

III. Փողի չգոյութեան պատճառով երկրի գրու-  
թիւնը խիստ ճգնաժամային է: Ես մի մարդ, երեք  
ազնիւ գործիչների հետ, կատարելապէս յոգնեցի թա-  
գաւորող չարիքի դէմ կուսելով և սպասելով:

Երկրի փրկութեան սիրուն ուղարկեցէք ոյժեր  
և ազատեցէք ինձ այս դաւաճան Խալիլ բէյից և ըն-  
կերներից: Խորհով բէկը և ես յուսահատուծ ենք:

Օգնեցէք Միր Ի. սուպ աղային: Խնդրութեամբ հայերը  
կոտորում են քաղցից, թող հայերը կամ տանեն նը-  
բանց իրենց մօտ և կամ նիւթական օժանդակութիւն  
հասցնեն: № 200, 22 յունւարի, 1920 թ.:

Նահանգապետ՝ Սամիգ Զամալինսկիյ

№ 61

Երևան, դիւանագիտական ներկայացուցչին Երևա-  
նում

(Նախիջևանից հնդ-եւրոպական հեռագրաթերով)

I. Ամերիկացիները թնչ պատճառով են հեռա-  
նում Նախիջևանից:

II. Քաղաքական աշխարհում, առհասարակ, թնչ  
կայ: Հայերը մասնակի յարձակութեամբ են կատարում  
սահմանների վրայ. այդ մասին հաղորդած է Հասկե-  
լին:

III. Ձեզ յայտնի սնձանց հակաշխատանքը և թէ  
շարունակի, ես և ընկերները կդատապարտենք կոր-  
ծանման: Առանց փողի, ոյժերի և մարդկանց, չեմ կա-  
րողանում եօլա գնալ: Խալիլ բէյը իրեն յայտարարեց  
լուրի գլխաւոր և ցանկանում է մօտ օրերս յեղաշրջում  
առաջ բերել ու կօտորել իմ մօտ աշխատակիցներին:

IV. Դրամը բոլորովին վերջացել է. երկրորդ  
ամիսն է, որ պաշտօնիկները ուճիկ չեն ստացել. այդ  
բանը (ձեռնտու) է Խալիլ բէյին և նրա նենգ նպա-  
տակներից գաղթականները գլխովին ոչնչանում են:

V. Հաղորդեցէք կառավարութեան, № 100, 3-ն  
փետրւարի, 1920 թ.:

Նահանգապետ՝ Զամալինսկիյ

№ 62

Շտապ

Բազու, արտաքին գործերի նախարարին

Նախիջևանի գեներալ-նահանգսպետը հետևող-  
ազ յայտնում է, որ իր դրութիւնը ճշմարտային է,  
և թախիբէյը յայտարարել է իրեն խմբի գլխաւոր,  
պատրաստում է դրաւել իշխանութիւնը՝ կոտորելով  
Ջամալիսկու բոլոր հաստատութիւններին: Փողի չգոյո-  
թիւնը, պաշտօնեաների ոտձիկ չստանալը դրութիւնը  
աւելի վատացնում է: Անհրաժեշտ է շտապ կերպով  
ուղարկել փող և ոյժեր: Խնդրեցէք թախիբէյին,  
որ թախիբէյին յետ կանչէ, պա թէ ոչ կարող է եր-  
կրում տնիշխանութիւն ծագել: № 89, 4 վեարւարի  
1920 թ.:

Ազրբէջանի դիւանագրտ. և երկայաց. Հախվերդով

№ 63

Շտապ

Երևան, Ազրբէջանի դիւանագիտական ներկայացու-  
ցիչ՝ Հախվերդովին

Դրամներ այսօր կուղարկենք: Թախիբէյի վերա-  
բերմամբ այսօր միջոցներ ձեռք կառնւեն: № 153, 7  
փետրւարի, 1920 թ.:

Նախագահ՝ Ուսուրբէկով

№ 64

Երևան, Ազրբէջանի դիւանագիտական ներկայացուցիչ՝  
Հախվերդովին

Մըստըր Ուորդրոպը խնդրում է աջակցել բանա-  
լու Ջուլֆա-Երևան երկաթուղադիժը: Հետագրով հա-

դորդեցէք ձեր կարծիքը, թէ, արդեօք, մեր քաղաքա-  
կան-տնտեսական շահերի տեսակէտից ցանկալի է  
այդ ճանապարհի բացումը: № 24, 2 փետր. 1920 թ.:

Արտաքին գործերի նախարար՝ Խոսիկ

№ 65

Բազու, արտ. գործ. նախարարին

Պատասխան № 24 հետագրի: Թախ քան մեր փոխ-  
յարարերութիւնների կարգաւորումը և սահմանների  
որոշումը, Երևան-Ջուլֆա ճանապարհի բանալը հաստա-  
րում եմ աննպատակայարմար: Տնտեսական տեսակէ-  
տից այդ նպատակը է միայն Հայաստանին: Մեզ  
համար ճանապարհի բացումը դեռ ևս տնտեսական  
շահ չի ներկայացնում. իսկ քաղաքական շահերը թէ  
Նախիջևանում և թէ պարսկական Ազրբէջանում մենք  
կարող ենք հետապնդել առանց այդ ճանապարհի:  
Ուորդրոպը գործում է հայերի խնդրով: 10 փետրւարի  
1920 թ. № 114:

Դիւանագիտական ներկայաց. Հախվերդով

№ 66

Երևան, Ազրբէջանի դիւանագիտական ներկայացու-  
ցիչ՝ Հախվերդովին

(Նախիջևանից)

Խնդրում եմ անյապաղ Նոր ծածկագիր ուղար-  
կէք:

Ջամալիսկի

№ 67

Նախիջևան, Ջամալիսկուն

Ինչպէս լսեցի, Ալիսանը, Հայաստանի կառավա-

թուփեան յանձնաքարութեամբ, Գելբալի խանին գայ-  
թակդեցուցիչ առաջարկութիւն պէտք է անի: Պէտք է  
խստիւ հատենել նրանց խօսակցութիւններին և, ըստ  
հնարանորին, աննկատելի կերպով խանգարել նրանց  
առանձնակի խօսակցութիւնը:

Դիւանագիտական ներկայաց. Հախվերդով

№ 68

Երևան, Ազրբէջանի դիւանագիտական ներկայացուցիչ  
Հախվերդովին:

Ձեր, կամ ձեր խորհրդականի արտակարգ մեկ-  
նումը անհրաժեշտ է: Ալիխանը առաջարկութիւնն  
արել է, նշաններից երևում է, որ յաջողութիւն ունի.  
Փող չունենալու պատճառով, իմ և երկրի զրութիւնը  
ճգնաժամային է: Երրորդ ասիսն է, ինչ պաշտօնեա-  
նիքը չեն ստանում: Ամեն կողմից լսում ենք, որ գար-  
նանը հայերը պէտք է յարձակեն: Չգիտեմ, թէ ում  
հետ և ինչ միջոցներով պորձեմ: Խնդրում եմ հաղոր-  
դէք կառավարութեան, որ ես հիւանդութեան պատ-  
ճառով, այլևս անկարող եմ աշխատել: Թող արտա-  
կարգ ձեռով ուղարկեն մի յարմար, փորձած մարդու  
և ինձ ազատեն:

Զամալինսկի

№ 69

Շտապ

Քազու, արտաքին գործերի նախարարին

Նախիջևանի նահանգապետը հաղորդում է, որ  
իր և երկրի զրութիւնը ճգնաժամային է, երրորդ ա-

միսն է, ինչ պաշտօնեաները չեն ստանում: Հայա-  
տանի կողմից Գելբալի խանին արած առաջարկը՝ Նա-  
խիջևանում բարձր պաշտօն ստանձնելու մասին, յա-  
ջողութիւն է գտնում: Զամալինսկին խնդրում է ըը-  
տազ ուղարկել մի փորձած մարդ և իրեն ազատել:  
Ես կարծում եմ, որ արտակարգ միջոցներով կտրելի  
է զրութիւնը փրկել: Անհրաժեշտ է Նախիջևան գնալ  
զրամով հանդիւձ, բայց դժբախտաբար դրամը Թիֆ-  
լիսից դեռ չէ ստացւել: 27 փետրուարի, 1920 թ.  
Ի. ա. զիւ. ներկայաց. Մուսաև

№ 70

Երևան, Ազրբէջանի ներկայացուցչին  
(Նախիջևանից)

Քաղաքական, տնտեսական և այլ տեսակէտնե-  
րից մեծ վնաս է հասցում մեր հանրապետութեանը՝  
Թաւրիզում ձեր ներկայացուցչի չունենալու հետե-  
ւանքով: Ներկայացուցչի գոյութիւնն այնտեղ կարող  
էր նախագրւել անհրաժեշտ և ոչնչացնել հայկական կազմա-  
կերպութիւնն ու մեզ համար պատրաստուող վտանգը  
և նոյնպէս կարող էր թիթեացնել և բարեօքել քաղա-  
քացիների կացութիւնը: Ծայր անհրաժեշտութիւն եմ  
համարում անյապազ կերպով այնտեղ ուղարկել մեր  
ներկայացուցչին: Որպէսզի փութացնեմ այդ հարցի  
իրագործումը, իմ կողմից առաջարկում եմ իմ գրա-  
սենեակի վարիչ Միրզա Զաֆար Մամեդովին, որը  
յայտնի է Երևանի հայրենակցութեանը, պարլամենտի  
որոշ անդամներին և լուսաւորութեան միջխտը Շախ-  
թախթինսկուն: Փետրուարի 29, 1920 թ.:

Զամալինսկի

№ 71

Երևան, Ադրբեյջ. դիւ. ներկ. Հախվերդովին  
(Թիֆլիսից)

Պետական ինքնապաշտպանութեան կոմիտէն խո-  
շոր գումար է յատկացրել Նախիջևանի գեներալ-նա-  
հանգապետ Զամալինսկու կարգադրութեանը: Այդ  
գումարը ձեր միջոցով պիտի յանձնուի Զամալինսկուն:  
Այդ փողերը ես առանձնապէս Բագրից փոխադրել եմ  
Թիֆլիս: Բարեյոյս մարդ ուղարկեցէք փողերը Երևան  
բերելու համար: Աւելի նպատակայարմար եմ համար-  
ում փողերի համար ձեր Թիֆլիս գալը: Պատասխա-  
նեցէք շտապ: № 12:

Դիւան. ներկ. Վէքելով

№ 72

Նախիջևան, գեներալ-նահանգապետին

Ձեզ համար Թիֆլիս է բերւած մի խոշոր գու-  
մար: Մօտ օրերս Երևանում կը ստացւին և առանց  
դանդաղելու ձեզ կուղարկեն: Համոզեցէք ձառայող-  
ներին, որ այդ հարցը օրերի խնդիր է: Թաւրիզում  
ներկայացուցիչ ունենալու հարցում միջնորդութիւն  
կը յարուցեմ: № 240:

Ի. տ. դիւ. ներկ. Մուսակ

№ 73

Բագու, արտաքին գործերի նախարարին

Մինչև այսօր փող չստանալը Նախիջևանի հա-  
մար ոչինչ է դարձնում գեներալ նահանգապետի աշ-  
խատանքը և էական վնաս է պատճառում հանրապե-

տութեան: Զանգիրասարը նոյնպէս սոսկալի կացու-  
թեան մէջ է առանց մեր դրամական օժանդակութեան,  
ինչ ձեռնտու է Հայաստանին: Երկու շրջանները ես  
պաշտպանում եմ նրանով, որ փողերը արդէն Թիֆ-  
լիսում են և Յիւանում ստացելուց յետոյ, առանց  
դանդաղելու պիտի ուղարկւեն ըստ պատկանելոյն:  
Իսնդաղեցման իւրաքանչիւր մի բողէն ուժեղ կեր-  
պով անդրադառնում է մեր շահերի վրայ: Խնդրում  
եմ ձեր կարգադրութիւնը, քանի դեռ ուշ չէ: № 247  
մարտի 4-ին, 1920 թ.:

Ի. տ. դիւ. ներկ. Մուսակ

№ 74

Բագու, արտաքին գործերի նախարարին

Թախանձազին խնդրում եմ, շտապեցրէք Թէմուր  
բէկին ճանապարհել: Հրօսախմբի նախօրօք պատրաս-  
տած ինձ հետ պատասիւժ քստմեկի դէպքից յետոյ,  
իմ այստեղ մնալը անմտութիւն եմ համարում: № 209,  
մարտի 10, 1919 թ.:

Դիւանագրտ. ներկ. Հախվերդով

Նկատողութիւն.— Վէքելովի հեռագրի համաձայն,  
Հախվերդովը Թիֆլիս գալով ստացել է Նախիջևանի,  
Զանգիրասարի և այլ շրջանների համար նախօրօք  
նշանակւած փողերը, սակայն Երևան վերադառնալիս  
չէզոք զոնայում կողպուել է չարագործներէց:

№ 75

Երևան, Ադրբեյջանի դիւանագրտակ. ներկայացուցիչ  
Մակինսկուն

Մարտի 22-ի դիւերը ամբողջ Դարաբաղում բո-

լոր հայերի ապստամբութիւնն է սկսել: Միաժամա-  
 նակ հայկական զինուած սլոխերը Թաւրէնդում, Ասկեա-  
 ր սնում, Թարթուսում և այլ տեղերում մեր զօրքերի  
 վրայ յարձակում են գործել: Յարձակութիւնները ստ-  
 այժմ կստեցրուած են, հայերի կողմից կորուստները  
 մեծ են: Ամենուրեք կռիւներ են տեղի ունենում: Բոլոր  
 անհրաժեշտ միջոցները ձեռնարկուած են: Շտապ հա-  
 զորդեցէք Վեդերաստարի և Նախիջևանի շրջաններում  
 կատարուող զէպքերի մասին: Անհրաժեշտ է առանց  
 դանդաղելու ամեն միջոցներով հնարատարութիւնը  
 հասցնել Վեդերաստարին և Նախիջևանին և Երազեկ ա-  
 նել նրանց Ղարաբաղի զէպքերին: Ճ 59, մարտի 24  
 1920 թ.:

Արտ. գործ. նախար. Սոյսկի

Նկատողութիւն. — 1920 թ.ի ապրիլի 4 ին էջմիա-  
 ծնի գաւառի Դաարարազ գիւղի մօտ, ապստամբ  
 Չանգիբասարի շրջանը մեկնող երեք զինուած թուրքեր  
 են բռնուած: Կալանաւորուածների մօտ գտնուել են Ա.  
 զրբէջանի ընտեր 499,750 ու., Անգրկովկասեան բռներ՝  
 11,050 ու. և Հայկական չէկեր 1,100 ու. Այդ մարգիկ,  
 պարզուել է որ երևանի Ա.զրբէջանեան միասիայի կա-  
 ռաններն (պահակներ) են եղել: Ինչպէս յայտնի է  
 դարձել, նրանք եկել են միասիայի աւսումը իրով զիւ-  
 ներկ: Մակինսկու յանձնարարութեամբ և մաղրուել  
 էին թափանցիլ Չանգիբասարը՝ փողը ապստամբնե-  
 րի ղեկավար Մուրա Ղասուսին յանձնելու գիտաւորու-  
 թեամբ: Այդ երեք անձնաւորութիւնները և միասիայի  
 շրջերը յանձնուել են Հայաստանի հանրապետութեան  
 զինուորական դատարանին:



ՀՀ Ազգային գրադարան



NL0411884

